# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 13 նիստի, կայացած 2024թ. դեկտեմբերի 21 -ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներից 6-ը, ինչպես նաև Արենի համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանը, որը ըստ կարգի հանդիսանում է հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Միքաելյան / մարզպետ /
քարտուղար՝ Մ. Մեսրոպյան
անդամներ՝ Գ. Մարգարյան
Ա. Ղազարյան
Հ. Նազարյան
Է. Հովհաննիսյան
Հ. Սահակյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի 1 /մեկ/ միավոր քաղաքացի Գեղամ Հարությունանի սեփականություն հանդիսացող / ծածկագիր 10-004-00121-0034/ 0,18048հա վարելահողից 0.03հա վարելահողը փոխադրել խոտհարքի չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Կ. Միքաելյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքը իրոք փաստացի խոտհարք է, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը վերոնշված / ծածկագիր 10-004-00121-0034/ 0,18048հա վարելահողից 0.03հա վարելահողը, որը հանդիսանում է քաղաքացի Գեղամ Հարությունյանի սեփականությունը՝ դասել խոտհարքների շարքին:

Առաջարկվեց Արենի համայնքի ղեկավարին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալից՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Արենի համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում համայնքի 1 (մեկ) միավոր քաղաքացի Գեղամ Հարությունյանի սեփականություն

հանդիսացող (ծածկագիր 10-004-0121-0034) 0,18048հա վարելահողից 0,03հա վարելահողը փոխադրել խոտհարքի, չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակը տրամադրել համայնքի ղեկավարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. ՄԻՔԱՍԼՅԱՆ

Քարտուղար՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ